**Դրամաշնորհային աջակցություն «Մարդկային անվտանգության ծրագրերի» համար ՖՏ 2019։**

**«Մեղրի համայնքի մանկապարտեզում արևային էներգիայի համակարգի տեղադրման»**

**ծրագրի եզրափակիչ արարողություն**

2023թ. հունիսի 22-ին Մեղրի համայնքի մանկապարտեզում տեղի ունեցավ «Մեղրի համայնքի մանկապարտեզում արևային էներգիայի համակարգի տեղադրման» մինչև 51,154 ԱՄՆ դոլար ֆինանսավորմամբ Ճապոնիայի կառավարության Մարդկային անվտանգության «Grassroots» ծրագրերի համար դրամաշնորհային աջակցության եզրափակիչ արարողությունը։

Արարողությանը ներկա էին ՀՀ-ում Ճապոնիայի արտակարգ և լիազոր դեսպան պարոն Մասանորի Ֆուկուշիման, Մեղրի համայնքի ղեկավար պարոն Բագրատ Զաքարյանը, Մեղրի համայնքի մանկապարտեզի տնօրեն տիկին Սյուզան Սարգսյանը, ինչպես նաև տարբեր շահառուներ, այդ թվում՝ մանկապարտեզի սաները, ծնողները և ուսուցիչները/աշխատողները։

Ծրագիրն իրականացվել է մանկապարտեզի կրթական միջավայրը արևային էներգիայի համակարգով և ջրատաքացուցիչով համալրելու միջոցով բարելավման նպատակով, ինչպես նաև Մեղրի քաղաքում նախադպրոցական կրթության որակի բարձրացման նպատակով։ Արդյունքում մոտ 350 մարդ օգտվում է ծրագրից։



Շենքի տանիքին տեղադրված արևային մարտկոցները



Դեսպան Ֆուկուշիմայի ելույթը



Կատարում երեխաների կողմից



ՉՊԱ ցուցանակի բացումը

Մեդիա: https://www.syunik.tv/archives/26578